

ԴԵՂԱՆՈՒԿԱՆԵՐԻ ՄԱՐՔԵՐԱԿԻՀ ԱԽՏՈՐՈՉՈՒՄԸ

ԵՊԲԸ Վարակաբանության ամբիոն

ԹԵՄԱՅԻ աՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեղնուկը որպես ախտանիշ դիտվում

- Վարակային
- ոչ վարակային հիվանդությունների դեպքում (թերապևտիկ, հեմատոլոգիական, վիրաբուժական, ուռուցքային, ժառանգական հիվանդությունների և հեպատոտոքսիկ դեղորայքի ազդեցություններ):

ԴԵՂԱՆՈՒԿԱՆԵՐԻ զարգացման ՄԵԽԱՆԻԳՄԱՆԵՐԸ

- Երիթրոցիտների ուժեղացած քայքայում
- Լյարդի ախտահարում
- Խոլեստազ

Վերը նշված բոլոր գործոնների համակցում

- Ալիմենտար և քիմիական մեխանիզմները.
 - զարգանում են ցիտրուսների, գազարի մեծաքանակ օգտագործման դեպքում (բետա կարոտինային փոխանակության խանգարում)
 - ակրիտինի օգտագործում (խիճակրին)

Այս դեպքում գունավորվում է միայն մաշկը, լսարդը չի մեծանում, ֆունկցիան լինում է նորմալ

Պիզմենտային փոխանակությունը նորմայում

Այն բաղկացած է հետևյալ օղակներից.

- առաջացում
- կապում
- տրանսպորտ
- զավթում
- կոնյուգացիա
- արտազատում դեպի աղիներ
- օրգանիզմում լեղային պիզմենտների հետազա փոխակերպում

Առաջացում

- ֆիզիոլոգիական պայմաններում օրեկան՝
 - հեմոլիզվում է էրիթրոցիտների 1%-ը
 - քայքայվում է 6-7 գ. հեմոգլոբին
 - առաջանում է 200-250 մգ ազատ բիլիռուբին
- **ազատ բիլիռուբինի** 80-85%-ը գոյանում է վերը նշված սխեմայով
- 15-20%-ը առաջանում է.
 - փայծաղի և ոսկրածուծի ոչ հասուն բջիջներից
 - լյարդում՝ հեմոսիդերին պարունակող սպիտակուցներից (ցիտոքրոմ բ-450 և միոգլոբին)

Տրանսպորտ

- ազատ (չկոնյուգացված, անուղղակի) բիլիոնբինը
ամուր կապված է ալբումինի հետ
- չի անցնում Երիկամային ֆիլտրով
- տոքսիկ է, հատկապես ուղեղանյութի համար
- տեղափոխվում է լյարդ

Զավթում

Դիսեի տարածությունից.

- զավթում է հեպատոցիտների կողմից
- բիլիռուբին-ալբումին համալիրը դիսցազում է
- սինուսիտալ բևեռով անցնում է հեպատոցիտի մեջ

Կոնյուլօացիա

- ուրիդին-դիֆոսֆատ-գլուկուրոնիլ-տրանսֆերազի (ՈՒԴՖՏ) ազդեցությամբ բիլիռուբինը վերածվում է բիլիռուբին մոնօգլուկուրոնիդի (30%)
- բիլիռուբին-գլուկուրոնիլ-տրանսֆերազի օգնությամբ բիլիռուբինը վերածվում է բիլիռուբին դիօգլուկուրոնիդի (70%)
- **կապված** (կոնյուլօացված, **ուղղակի**) բիլիռուբինը
 - ջրում լուծելի է
 - անցնում է երիկամային ֆիլտրով
 - ավելի քիչ տոքսիկ է

Արտազատում դեպի աղիներ

Կոնյուգացված բիլիռուբինը ենթարկվում է էքսկրեցիայի
դեպի 12-մատնյա աղու լուսանցք քիլիար բներով

- բարակ աղիներում վերածվում է ուրոբիլինոգենի և ստերկոբիլինոգենի
- աղիներից ուրոբիլինոգենի որոշ մասը ներծծվում է արյան մեջ և վերադարձվում դեպի լյարդ, որտեղ էլ տեղի է ունենում նրա վերջնական չեզոքացումը
- ուրոբիլինոգենի աննշան մասը արտազատում է երկամների միջոցով
- ստերկոբիլինոգենից առաջանում է ստերկոբիլին, որով էլ պայմանավորված է կղանքի գունավորումը

ԴԵՂԱՆՈՒԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ըստ ժամանակակից դասակարգման տարբերում են.

Վերլարդային
(հեմոլիտիկ)

Ծարդային
(պարենխիմատոզ)

Ստորվարդային
(խոլեստատիկ)

Էրիթրոցիտների
ուժեղացված
քայքայում

Ինվալոցիտների
ախտահարում

Լեղուղիների
անցանելիության
խանգարում



ՎԵՐՍԱՐԴԱՅԻՆ ԴԵՂԱՆՈՒԿԱՆԵՐ (1)

Ընդհանուր նշաններ

- հիպերֆիլիռութինեմիան հիմնականում չկոնյուգացված բիլիռութինի հաշվին է
- կղանքը և մեզը մուգ են՝ ուրոբիլինոգենի բարձր պարունակության հաշվին
- մաշկային ծածկույթները դեղնուկային և գունատ են (անեմիա)
- լյարդը մեծացած չէ
- լյարդի ֆունկցիան խանգարված չէ (ԱՍՏ-ի, ԱԼՏ-ի և ՀՖ-ի ակտիվությունը նորմալ են)
- ծայրամասային արյան մեջ。
 - անեմիա (էրիթրոցիտոպենիա)
 - ռետիկուլոցիտոզ (էրիթրոցիտների ռեզենտերացիայի ուժեղացում)

ՎԵՐԱՐԴԱՅԻՆ ԴԵՂՈՆԼԿՈՒՅԹ (2)

Տարանջատվում են.

- կորրպորատուլյար
- էքստրակորպորատուլյար
- բիլիռուբինի ուժեղացված արտադրություն
տարածուն հեմատոմաներում

Կորպուսկուլյար հեմոլիտիկ դեղնուկ	Էքստրակորպուսկուլյար հեմոլիտիկ դեղնուկ	Հեմոլիտիկ դեղնուկներ՝ այլ պատճառներից
<p>1. էրիթրոցիտների կենսաքիմիական դեֆեկտներ.</p> <p>– անբավարար ԳԵՖԴՀ</p>	<p>1. իզոհակամարմին- ներ (անհամատեղելի արյան ներարկում)</p> <p>2. տարբեր վարակային ագենտների հեմոլիզիններ (վիրուսներ, լեպտոսպիրներ, սեպսիսի հարուցիչներ)</p> <p>3. մալարիայի պլազմոդիումներ</p> <p>4. հեմոլիտիկ թույների ազդեցություն (մկնդեղ, ծծմբաջրածին)</p>	<p>1. էրիթրոցիտների քայլայում խոշոր հեմատոմաներում</p> <p>2. սրտամկանի տարածուն ինֆարկտ</p> <p>3. արյունազեղում որովային խոռոչ</p> <p>4. արյունազեղում պլազմայի խոռոչ</p>
<p>2. էրիթրոցիտների քաղանթի դեֆեկտ.</p> <p>– ժառանգական միկրոսֆերոցիտոզ</p> <p>– ժառանգական ստոմացիտոզ</p> <p>– պարոքսիզմալ գիշերային հեմոգլոբինուրիա</p>		
<p>3. հեմոգլոբինոպաթիա ներ (քալասեմիա), գլոբինի սինթեզի ժառանգական խանգարում</p>		

Առևտություն հեմոլիսիկ դեղնուկներ

1. իդիոպաթիկ (պատճառները անհայտ են)
2. ախտանշանային

միելոմային
հիվանդություն
լիմֆոլեկոզ
լիմֆոսարկոմա
համակարգային
կարմիր գայլախատ
ռևմատոիդ արթրիտ
ոչ յուրահատուկ
խոցային կոլիտ



կարմրուկ
կարմրախատ
անգինա
համաճարակային
պարուտիտ

Լյարդային դեղնուկներ

Ընդհանուր նշաններ

- հիպերբիլիռուբինեմիան հիմնականում կոնյուգացված բիլիռուբինի հաշվին է
- մեզը մուգ է, ի հաշիվ բիլիռուբինի բարձր պարունակության, կղանքը ախտլիկ է
- մաշկային ծածկույթները դեղնուկային են (flavin ichterus)
- Սարդը չափավոր մեծացած է
- Սարդի ֆունկցիան խանգարված է.
 - ԱԼՏ-ի և ԱՍՏ-ի ակտիվությունը կտրուկ բարձրացած է
 - նստվածքային -կոլոիդային փորձերը շեղված են
 - պրոթրոմբինային ինդեքսը իջած է
- ծայրամասային արյան մեջ.
 - կարմիր արյունը փոփոխված չէ, ԷՆԱ-ն նորմալ է կամ իջած, երբեմն լեյկոպենիա

Վիրուսային վարակային հիվանդություններ

1. Սուր հերպեսային լյարդաբորք

- հաճախ զարգանում է գեներալիզացված ձևի դեպքում իմունիտետի խիստ ընկճան պայմաններում
- ուղեկցվում է արտահայտված դեղնուկով, հեպատոսալենոմեգալիայով, ինտոքսիկացիայով
- Սուր հերպետիկ լյարդաբորքն ընթանում է.
 - տարածուն հերպետիկ էկզամենտայով և էնանթեմայով
 - հերպետիկ էնցեֆալիտով
 - հերպետիկ թոքաբորբով (վիրուսային, բակտերիալ բնույթի)
- ընթացքը շատ ծանր է, մահացությունը – 30%
- ախտորոշումը
 - վիրուսոլոգիական (վիրուսի կուլտիվացում)
 - շնչաբանական (ՇԿՌ, ԻՖԱ, ԻԱՌ)
 - ՊՇՌ (վիրուսի ԴՆԹ-ի հայտնաբերում)

2. Սուր ցիտոմեգալովիրոհսային (ՑՄՎ) հեպատիտ

3. 2.1 բնածին ցիտոմեգալովիրուսային վարակն ընթանում է սուր հեպատիտի ախտանշաններով.

- արտահայտված դեղնուկ, որը հարածում է 2-3րդ շաբաթների ընթացքում, հետագայում շատ դանդաղ նվազում է (2-6-րդ շաբաթներ)
- էնցեֆալիտ, որը ուղեկցվում է աչքերի բնածին ախտահարումներով
(կատառակտ, խորիոռետինիտ, տեսողական նյարդի ատրոֆիա)
- հեպատոսալենոմեգալիա
- հեմոռագիկ էկանթեմա
- ծայրամասային արյան մեջ արտահայտված անեմիա և թրոմբոցիտոպենիա

2.2 Ճեղքբերովի ՑՄՎ վարակն ընթանում է հմունխտետի խիստ ընկճման պայմաններում.

- սուր ցիտոմեզալովիրուսային հեպատիտի առաջացում՝
 - բարձր տենդ, տոքսիկոզ
 - արտահայտված դեղնուկ
 - հեպատոսալենոմեզալիա

Մնացած օրգանային ախտահարումներ

- վիրուսային ծագման թորշոմ ընթացքի թոքաբորբ
- էնցեֆալիտ
- տարածուն էկզանթեմաների և էնանթեմաների բացակայություն, որը համարվում է տարբերակիչ ախտորոշիչ չափորոշիչ հերպետիկ վարակի բացառման համար

ՑՄՎ վարակի ախտորոշումը

1. Թքի, մեղի, ստամոքսի պարունակության, ՈՒՌ-ի բջջաբանական հետազոտություն (ցիտոմեգալների հայտնաբերում)
2. Վիրուսաբանական (վիրուսի կուլտիվացում)
3. Շճաբանական (IgM և IgG)
4. ՊԾՈ (վիրուսի ԴՆԹ-ի հայտնաբերում)

3. Սուր հեպատիտ վարակային մոնոնուկլեոզի դեպքում

- զարգանում է հաճախ
- արտահայտված դեղնուկ
- հեպատոսալենոմեգալիա՝ փայծաղի մեծացման
գերակշռմամբ
- արտահայտված ինտոքսիկացիա

Վարակային մոնոնուկլեոզի բնորոշ նշաններ:

1. Երկարատև տենդ, 38-40C, չի իջնում դեղնուկի ի հայտ
գալուց հետո
2. **Մոնզիլիտ** – հիվանդության առաջին օրերից
3. **ԳԼԱՊ** – հատկապես անկյունծնոտային պարանոցային
ավշահանգույցները՝ չափսերը 1-3 սմ, կարծրավուն, ցավոտ,
շարժուն

4. հեպատոլիենալ համախտանիշ (հնարավոր է փայծաղի պատռում)
5. ծայրամասային արյան փոփոխություն
 - լեյկոցիտոզ – 9-25 000.
 - լիմֆոմոնոցիտոզ
 - ատիահիկ մոնոնուկլեարներ ավելի քան 10% (ի հայտ են գալիս հիվանդության 2-3-րդ օրերին, պահպանվում են , 2-3 շաբաթից մինչ՝ 2 ամիս)
 - ԷՆԱ-ն նորմայի սահմաններում, կամ քիչ բարձր

4. Սուր Վիրուսային հեպատիտ դեղին տենդի դեպքում

- բնաօջախային, տրանսմիսիվ հիվանդություն
- կարանտինային վարակ
- սկիզբը սուր , հանկարծակի
- բարձր տենդ - 39-41C, ինտոքսիկացիա
- մկանացավեր, գլխանոցի ախտանիշ
- դեղնուկը հիվանդության 3-4-րդ օրվանից
- հեմոռագիկ համախտանիշ 5-րդ օրվանից՝ քթային, ստամոքսաղիքային, արգանդային, թոքային արյունահոսություններ և հեմոռագիկ էկզանթեմա
- մահը վրա է հասնում լյարդ-երիկամային անբավարությունից, վարակային-տոքսիկ շոկից

ԴԵՒՀԱ ՄԵԾՈՒՀ ախտորոշումը

Էպիդամնեզ՝ հիվանդը եղել է էնդեմիկ գոտում
(ինկուբացիոն շրջանի տևողությունը մինչև 5 օր)

- Վիրուսաբանական
- Շճաբանական

Բակտերիալ ծագման վարակային հիվանդություններ

1. Լեպտոսափիրոզ

- սկիզբը սուր է
- բարձր տենդ – 39-40°C
- դեղնուկը խառը բնույթի է, հիվանդության 3-5-րդ օրերից
- երիկամների ախտահարում
- մկանացավեր, հատկապես ձկնամկանները, օձիքի ախտանիշ
- շճային մեջինգիտ
- հեմոռագիկ համախտանիշ (արյունազեղումներ մաշկում, արյունահոսություններ)
- ծայրամասային արյան մեջ՝ նեյտրոֆիլ լեյկոցիտոզ, ԷՆԱ-արագացած

Ախտորոշում

1. Եպիդամնեզ (բաց ջրամբարներում լողանալը,
կենդանիների հետ կոնտակտ)
2. հարուցչի հայտնաբերումը արյան, ողնուղեղային
հեղուկի մեջ, իսկ ավելի ուշ՝ մեզում
3. Շճաբանական հետազոտություններ

2. Պանդոտութերկուլյոզ

- սուր հեպատիտ, դեղնուկի զարգացում
- սկիզբը սուր է
- բարձր տենդ – 39-40°C
- գլխանոցի ախտանիշ
- մեզադենիտ, տերմինալ իլեիտ
- յուրահատուկ, մանր կետավոր “քութեշանման” էկզամենտայի ամբողջ մարմնով հիվանդության 3-րդ օրվանից
- ափերի և ներբանների մաշկը հիանդեմիկ է
- լեզուն վառ կարմիր է՝ արտահայտված պտկիկներով (մորենիման)

Ախտորոշում

1. արյան, կղանքի, մեզի բակտերիաբանական հետազոտություն
2. Շճաբանական մեթոդներ

3. Աղիքային յերսինյոգ

- սուր հեպատիտը և դեղնուկը զարգանում են գեներալիզացված ձևերի դեպքում
- սկիզբը սուր՝ դող, քրտնարտադրություն
- բարձր տենդ – 39-40°C
- բազմածն ցան
- հեպատոսալ ենոմեգալիա
- արտահայտված դեղնուկ

Ախտորոշում

1. Հարուցչի անջատումը արյան, կղանքի, մեզի,
լիքվորում
2. Շճաբանական մեթոդներ

4. Սալմոնելյող

- սուր հեպատիտը և դեղնուկը զարգանում են հիմնականում գեներալիզացված ձևի դեպքում
- սկիզբը սուր է
- ջերմության բարձրացում մինչև $39-40^{\circ}\text{C}$,
արտահայտված տոքսիկոզ
- հեպատոսալ ենոմեգալիա, արտահայտված
դեղնուկ

Ախտորոշում

1. Հարուցչի անջատումը արյան, կղանքի, մեզի,
թարախային օջախից
2. Շճաբանական մեթոդներ

5. Սեպսիս.

- բնորոշ է առաջնային օջախների առկայությունը
- կրկնակի դիսեմինացում, երկրորդային օջախների զարգացում
- ընթացքի ացիկլայնություն
- պրոգրեսիվող ծանր ընթացք
- հեկտիկ հյուծող տենդ, դողերոցք, քրտնարտադրություն
- էկզանթեմա
- լյարդի ախտահարում դեղնուկի առաջացմամբ /հիմնականում կիտրոնագույն/
- ծայրամասային արյան մեջ – լեյկոցիտոզ, անեմիա

Ախտորոշում

Միևնույն հարուցչի հայտնաբերում արյան մեջ, առաջնային և երկրորդային օջախներում

5. Օրնիտոգ

- Սարդի ախտահարումը հանդիպում է ծանր ընթացքի ժամանակ
 - բարձր տենդ, մինչև 39-40C, արտահայտված տոքսիկոզ
 - հեպատոսալենոմեգալիա հիվանդության 7-8-րդ օրից
 - սուր հեպատիտ, դեղնուկ
 - ատիպիկ, ձգձգվող բնույթի քոքաբորբի զարգացում
 - ցավեր կրծքավանդակում
 - մանր բշտիկային թաց խզզոցներ, հազ՝ խորխարտադրությամբ
 - երկարատև ասթենիզացիա
 - ծայրամասային արյան մեջ՝ լեյկոցենիա, ԷՆ արագացում

Ախտորոշում

1. Համաճարաբանական անամնեզ (թռչունների հետ շփում, աշխատանք թռչնաֆերմաներում)
 2. Շճաբանական մեթոդներ

Վարակային հիվանդություններ՝ նախակենդանիներով հարուցված Ամերիբային հեպատիտ

Հեպատիտը և դեղնուկը արտահայտվում են
աղիքային երևոյթների ֆոնի վրա.

- լորձ
- ցավ աջ զտային շրջանում
- ապակենման լորձ (մորենման դոնդող)
- բնորոշ փոփոխություններ էնդոսկոպիայի
ժամանակ
- ջերմությունը նորմալ է կամ ենթատենդային

Ամերիքային թարախակույտ

- դեղնուկը առաջանում է աղիքային երևոյթների մարման կամ բացակայության շրջանում
- սկիզբը սուր՝ հեկտիկ տիպի բարձր տենդ, դողերոցք
- գիշերային քրտնարտադրություն
- ցավ, ոքք ուժեղանում է ներշնչելիս, հազի, դիրքի փոփոխության, շոշափման ժամանակ
- լյարդի չափերի մեծացում, մակերեսի անհամաչափություն
- հաճախակի տեղակայում՝ աջ բլթի վերին հատվածներում
- բարդություններ բացվելիս՝ ենթաստոծանիական թարախակույտ, թարախային պերիտոնիտ, պլերիտ, սրտի տամպոնադա (պերիկարդ բացվելու դեպքում)

ԱՄԵՐԻՔԱՆԻ ԱԽՏՈՐԻՉՈՒՄ

1. Կղանքի մանրադիտում՝ մեծ վեգետատիվ ձևի
(էրիթրոֆազ) և Շարկո-Լեյդենի բյուրեղների
հայտնաբերում
2. Էնդոսկոպիկ հետազոտություն
3. Թարախակույտի պունկցիա

Տոքսիկ հեպատիտներ

- Վարակային պրոցեսի նշանների բացակայություն (տենդ, ցիկլայնություն և այլ նշաններ)
- Տվյալ թունավորմանը բնորոշ նշաններ

ըստ վիճակագրական տվյալների, հիվանդների 2%-ի մոտ դեղնուկը պայմանավորված է դեղորայքի ընդունմամբ

ԱՄՆ –ում լյարդի ֆուլմինանտ անբավարության 25%-ը պայմանավորված է դեղորայքի ընդունմամբ

Եյարդի դեղորայքային ախտահարումներ

հաճախ առաջացնում են

- հակամանրեային դեղամիջոցները (տետրացիկլիններ, լևոմիցետին)
- սուլֆանիլամիդներ
- տուբերկուլոստատիկներ
- նյարդա- և հոգեմետ դեղորայք
- ΩՍՀԲ
- հորմոնալ դեղամիջոցներ
- ցիտոստատիկներ
- հակաթիրեոիդային դեղամիջոցներ
- անզգայացման համար կիրարվող դեղամիջոցներ (Փոտորոտան)
- սիրտանոթային դեղամիջոցներ

Սուր ալկոհոլային հեպատիտ

- դեղնուկը զարգանում է ալկոհոլիզմով տառապող հիվանդների մոտ
- ՀՖ, ԳԳՏ-ի ակտիվության բարձրացում
- խոլեստերինի, բետա-լիպոպրոտեիդների քանակի բարձրացում
- բիլիռուբինո-ամինոտրանսֆերազային դիսոնցիացիա
- ծայրամասային արյան մեջ՝ լեյկոցիտոզ

Տոքսիկ հեղատիտներ՝

տեխնիկական հեղուկներով մասնագիտական
թունավորմամբ

- ազոտի օքսիդ
- հիդրօքին և նրա ածանցյալներ
- թունավորում քլորէթանով
- թունավորում էթիլենօլիկոլով

Այս թունավորումները առաջանում են արտադրության մեջ,
որտեղից հիվանդները տեղափոխվում են սուր թունավորումների
բաժանմունք:

Ստորևարդային դեղնուկներ

Ընդհանուր նշաններ

- հիպերիլիռուբինեմիան հիմնականում կոնյուգացված բիլիռուբինի հաշվին
- մեզը մուգ, կղանքը՝ հիմնականում ախոլիկ
- մաշկը դեղին, երբեմն՝ հողագույն կամ կանաչավուն
- լարդը չափավոր մեծացած
- արտահայտված մաշկի քոր
- լարդի ֆունկցիան խանգարված է。
 - ՀՖ-ի ակտիվության բարձրացում, երբեմն՝ կտրուկ
 - խոլեստերինի, բետա-լիպոպրոտեիդների քանակի բարձրացում
 - ԱԼՏ-ի և ԱԱՏ-ի ակտիվությունը նորմալ կամ որոշ դեպքերում չափավոր բարձրացած
- ծայրամասային արյան մեջ。
 - հիմնականում՝ լեյկոցիտոզ և էնԱ-ի արագացում

Ստորև արդային դեղնուկների պատճառներ

- լյարդային և ընդանուր լեղուղիների օբստրուկցիա՝ քարերով կամ հելմինտներով
- ընդանուր լեղուղու ճնշում արտաքինից՝ ուռուցքով, մեխանիզմով, ավշային հանգույցով և այլն
- ընդանուր լեղուղու նեղացում՝ սպիներով
- լեղուղիների ատրեզիա

Քանի որ այս դեղնուկները պայմանավորված են լեղու նորմալ արտահոսքի խախտմամբ նրանք կոչվում են նաև մեխանիկական դեղնուկներ

Ստորևարդային դեղնուկ առաջացած հելմինթներով

- դեղնուկը՝ չափավոր կամ թույլ արտահայտված
- էպիդ տվյալներ՝ էնդեմիկ շրջանների այցելում
- արտահայտված էռզինֆիլիա /մինչև 20% և ավել/
- հելմինթների կամ նրանց ձվերի հայտնաբերում
- յուրահատուկ իմունոլոգիական մարկերների հայտնաբերում

Ժառանգական պիզմենտային հեպատոզներ

Հեմոլիտիկ, պարենխիմատոզ, սորսիկ դեղնուկների բացառման
դեպքում մնում են բիլիռուբինի փոխանակության ժառանգական
խանգարումով հիվանդները.

1. Ժիլբերի համախտանիշ
2. Կրիզլեր Նայարի համախտանիշ
3. Դաքին-Զոնսոնի համախտանիշ
4. Ռոտորի համախտանիշ

1. Ժիլերի համախտանիշ – ընտանեկան բարորակ չկոնյուգացված հիպերիլիռութինեմիա
 - պոպուլյացիայում կազմում է 2-5 %
 - ՈՒԴԳՏ-ի առևտոսոմ ռեցիսիվ արդյունք (սինթեզի իջեցում)
 - գյուկուրոնաթթվի հետ բիլիռութինի կոնյուգացիայի իջեցում մինչև 30%
 - բիլիռութինի միջին ցուցանիշները՝ 17-85 մկմոլ/լ
 - դեղնուկն ունի ինտերմիտվող բնույթ
 - սորբիտեհիդրոգենազի և
ԱԼՏ-ի ակտիվության բարձրացում
 - կարող է ուժեղանալ ինտերկուրենտ վարակներից և սովից
հետո (թուլություն, սրտխառնոց, տհաճ զգացողություններ
լարդի շրջանում)
 - արդյունքը բարենպաստ է, բուժում չի պահանջում

2. Կրիզեր-Նայարի համախտանիշ (I և II տիպեր)

I տիպ

- ՈՒԴՖԳՏ-ի ակտիվության լրիվ բացակայություն
- չկոնյուգացված բիլիռուբինի մակարդակը շատ բարձր է և մշտական աճում է
- բիլիռուբինի գլուկուրոնիդներ շիճուկում չեն հայտնաբերվում
- կղանքը ախտլիկ է, մեզը՝ բաց
- չարորակ լնթացք
- ԿՆՅ-ի ախտահարում (կորիզային դեղնուկ, մկանային հիպերտոնուս, նիսթազմ, օպիստոտոնուս, տոնիկ և կլոնիկ կծկանքներ)
- նորածնի մահ կյանքի 1-ին տարվա լնթացքում

II տիպ

- ՈՒՂՖԳՏ-ի առևտոսում-ռեցեսիվ դեֆեկտ.
ակտիվությունը զգալի իջած է՝ մինչև 10%
- չկոնյուգացված բիլիռուբինի բարձրացում, սակայն
ավելի քիչ, քան 1 տիպի դեպքում
- շիճուկում բիլիռուբինի գլուկուրոնիդների աննշան
բարձրացում
- ընթացքն ավելի բարենպաստ է, քան 1 տիպի
դեպքում
- արդյունք ֆենօբարբիտալով բուժումից

Շնորհակալություն
ուշադրության համար